

Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կանառին
Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան» նպաստով
Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կ'ԵՐԿԱՐԻ ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐՈՒ

ՈՍԿԵՂԷՆ ՇՂԹԱՆ

Միտքար Սեբաստացիի ծննդեան 300ամեակի յոբելինական տօնակատարութիւններու արձագանգը տակաւին չհանգած, Հայրենիքի եւ Սփիւռքի ահա՛ կ'երկարեն յոբելեաններու ոսկեղէն շղթան, ոգեկոչելով նուիրական յիշատակները լուսաշնորհ դէմքերու, որոնք մեր ժողովուրդի բեղմնաւոր ծոցէն ելած՝ փայլեցան Հայոց երկնակամարին վրայ, որպէս անմահանում հերոսներ Կրօնի, Հայրենիքի եւ Մշակոյթի:

Եկեղեցւոյ բեմերէն կարկառեցին անոնք մերք սուրբ խաչը տէրունի, որպէս հոգեւոր սնունդ՝ մեր ժողովուրդի լուսատեւն ու կրօնատէր գաւակներուն. երբեմն հայրենի ամրակառոյց բերդերէն շողացուցին սուրբն իրենց պողպատեայ, հայրենիքի սահմանները պաշտպանելու համար՝ մեր ազատութիւնը կեղեքող բռնակալ ոյժերու դէմ. բայց մանաւանդ՝ իրենց օրհնեալ գրիչները շարժեցին, լուսաւորութեան հեղեղ մը սփռելու համար մեր գրականութեան հորիզոնն ի վար, Մեսրոպաշունչ անհառ ծիածանին ցոլփելով շողուն:

Ու մենք, այսօր, ահաւոր ջարդէն ու սպանդէն ետք, եթէ կ'ապրինք, կը շնչենք ու կը գործենք, եւ ազգային քարմ շունչով կը կենդանացնենք Հայրենիքի եւ Սփիւռքի իրականութիւնները, անտարակոյս՝ այդ կը պարտինք այն կենսայորդ աւիշին, զոր ծծած ենք մեր լուսեքամ հերոսներէն, որպէս սրբամաքուր կաթնալոյս հայութեան: Այս իմաստով, անոնք այսօր ալ կ'ապրին մեզի հետ ու մեզի համար, եւ կը շարունակեն քեզմարդել մեր կեանքը:



Ահա՛ թե՛ ինչո՛ւ կը սիրենք յիշատակել մեր նախահայրերը, ոգեկոչել անոնց հերոսական կեանքն ու վաստակը, հանդէսներով պանծացնել անոնց սիրալի դիւցազնավէպը: Ու նախ՛ անշուշտ յայտնելու համար մեր երախտագիտական անխառն տրիտուրը, մեր նախնեաց բազինին վրայ արծարծելով մեր սիրոյ խնկարոյր բուրվառը, գետնդելով մեր որդիական դափնեպսակը, գիտակից գաւակներու հասունութեամբ ծաղկազարդ: Բայց մանաւանդ՝ վերարծարծելու համար պայծառ յիշատակը մեր անմահներուն, որոնց դէմքն ու գործը — արդէն ինքնին լուսապայծառ — պէտք էնք տեսականօրէն ալ լուսակերպել, օրէ օր միշտ աւելի ծանօթացնելով զանոնք մեր նոր սերունդներուն, եւ բաշխելով որպէս սրբազան ժառանգութիւն, որպէս կերակուր մեղրահամ եւ ոգեպարար, որպէս ոգեւորիչ մասունք անցեալի:

Շատ գնահատելի են, անշուշտ, յորելեաններու առիթով սարժուած գրական ու գեղարուեստական ոգեկոչումները, հաւաքական ցոյցերը՝ ակումբներու եւ հանդիսադահլիճներու մէջ. ասոնց առընթեր՝ օգտակար է նաեւ այդ հերոսներուն պատկերներով շքեղադարձել մեր օրացոյցներն ու դպրոցները, անոնց մետալներով պննել մեր կուրծքերը, բայց մանաւանդ՝ շատ կարեւոր է խանդավառել հայ պատանիներու հոգիները, դպրոցներու մէջ՝ կարդալով ու վերլուծելով մեր անմահներուն երկերը, արտասանելով անոնց պատգամներն ու փերթուածները, շարադրութեան նիւթեր առաջարկելով՝ անոնց մասին, դասեր առնելու համար անոնց կեանքէն ու հասարակական գործունէութենէն, անոնց հերոսական նկարագրէն, անոնց վեհանձն նուիրումէն՝ ի նպաստ ազգային շահերու:

Այսպէս ահա՛ մեր յորելեանները պիտի գան ամսէ ամիս անդադար յեղյեղել՝ թէ անցեալի փառք յիշատակներով միայն ապրող ժողովուրդ մը չենք մենք, ո՛չ ալ պատմութեան երանաւէտ տեսիլներով օրօրուող հաւաքականութիւն մը, մեր ինքնութիւնը տեսականօրէն սպառող Սփիւռքի քարածֆին վրայ ցրուած: Մեր յորելեաններու ոսկեղէն շղթան՝ մեզի հոգեւոր կենդանութիւն առթող սրբազան օղակ մը պիտի դառնայ, հայութեան աշխարհացրիւ գաւակները իրարու սերտօրէն զօդող, սերունդները՝ համաշունչ նկարագրով մեծցընող ու պայծառացնող լուսաւոր կանթ մը, հոգիները ներփառալէս ու լիովին իրարու զանգող եղբայրացուցիչ զօդ մը, մեր փառապանծ անցեալն ու ներկան եւ նոյնիսկ ապագան իրարու շղթայող ոգեւորիչ կապանք մը: Շղթայ մը ոսկեղէն՝ որ կաշկանդիչ ու ջլատող ծանրութիւն մը չէ, այլ՝ լուսատու գորութիւն մը, մեր ժողովուրդի տեսական յարութիւնը ապահովող:

Կը հնչեն, ահա՛, զանգերն յաղթական 1978ի.

300ամեակ ծննդեան՝ Կ. Պոլսոյ Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի մեծագործ Պատրիարքի (1678–1741).

250ամեակ մահուան՝ Հալիճորի երեւելի հերոս եւ հայ ազատագրութեան պանծալի կազմակերպիչ Դաւիթ Բէկի (1728).

150ամեակ ծննդեան՝ սիրոյ եւ եղբայրութեան անգուգական երգիչ Մկրտիչ Պէշկէփաշեանի (1828–1868).

150ամեակ՝ արեւելեան Հայաստանի Ռուսաստանի միացման (1828).

100ամեակ մահուան՝ հայ դրամագիտութեան նախահայր Միսիփարեան վարդապետ Հ. Կղեմէս Սիպիլեանի (1824–1878).

100ամեակ ծննդեան՝ Սիամանթոյի († 1915), Զապէլ Նսայեանի († 1943?), Վահան Թէֆէեանի († 1945), Արագիի († 1965), Թէոդիկի († 1928), Աղեփանդր Թամանեանի († 1947):

Կերկարի տակաւին շղթան՝ նշելի փոքրիկ յորելեաններու ալ, նուիրական յիշատակներով տարեդարձներու ծննդեան կամ մահուան երեւելի հայ բանաստեղծներու, երաժիշտներու, լեզուաբաններու, վիպասաններու, դերասաններու, հրապարակագիրներու, ինչպէս օրինակ՝ 90ամեակ մահուան Ծերենցի, Բաֆֆիի, կամ 70ամեակ մահուան Ե. Տէմիրճիպաշեանի, Ա. Արփիարեանի, Մուրացանի, Մ. Մեծարեցիի, եւն...:

Մեր երկնակամարէն անցնող արշաւ մըն է յաղթական՝ անմահ հոգեւորականներու, զօրավարներու, գրագէտ-բանաստեղծներու, մարտաբաններու, որոնք խաչով, սուրով ու գրիչով հիմերը դրին այսօրուան մեր վերելքին յարանում, Արարատի ստորոտէն մինչեւ հեռաւոր ովկիանոսը խաղաղութեան, արքեպիսկոպոստի ամէնուրեք ստեղծագործ ոգին Լուսաւորչի, Տրդատի եւ Մաշտոցի:

Հրաշագործ յորելեաններու շունչին տակ կենարար՝ թող երջանիկ ապրի ու բարգաւաճի մեր ժողովուրդը, Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ, իր հարազատ կրօնով, իր թախծանոյշ երգով, իր յառաջադէմ մշակոյթով, իր հազարագամ լեզուով, դարբնելով յաւէտ սիրոյ եւ եղբայրութեան ամրակուռ օղակ մը՝ հորիզոնէ հորիզոն:

Թող երկարի յորելեաններու ոսկեղէն շղթան:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԱՆ